ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ («ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ (CAST) ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԴԴ-ՄԱԾՁԲ-23/06»

ք. Երևան «31» «01» 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մանուկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների («Դատական համակարգ» համակարգչային ծրագրի (CAST) սպասարկման ծառայությունների) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9 000 000 (ինը միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ 03.01.2023թ-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագիր կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **22** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 25փ. 25տ.
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01555207
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1570003653770100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Ա. Մանուկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 31 » « 01 » 2023 թ. կնքված
«ԴԴ-ՄԱԾՁԲ-23/06» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության								
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը*
1	72261160/1	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ («Դատական համակարգ» համակարգչային ծրագրի (CAST) սպասարկման ծառայություններ)	**«Դատական համակարգ» համակարգչային ծրագրի (CAST) սպասարկման ծառայություններ** *(կից՝ տեխնիկական բնութագիրը)*	դրամ	9 000 000	1	ներկայացված է տեխնիկական բնութագրում	03.01.2023թ-ից մինչև 31.03.2023թ. ներառյալ

** Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը՝ պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ 03.01.2023 թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ձեռքբերվող ծառայության
Հայաստանի Հանրապետության դատարաններում դատավորների միջև գործերը բաշխվում, վերաբաշխվում և կոլեգիալ դատական կազմերը ձևավորվում են, ինչպես նաև գործավարությունն իրականացվում է «Դատական համակարգ» համակարգչային ծրագրի (այսուհետև՝ Ծրագիր) միջոցով: Ծրագրի աշխատանքն ապահովվում է Դատական դեպարտամենտում և ՀՀ դատարաններում տեղաբաշխված ոչ ավել, քան 98 սերվերների (այսուհետ՝ Սերվերներ) միջոցով (ցանկը՝ ստորև): **Ծրագրի սպասարկում** **Ապահովել Ծրագրի անխափան աշխատանքը՝ Դատական դեպատամենտի կողմից սարքավորումների անխափան աշխատանքի դեպքում: Կատարել համապատասխան ծրագրային շտկումներ ՀՀ օրենսդրության պահանջներին և Դատական դեպարտամենտից ստացված հանձնարարականներին համապատասխան:** **Ծրագրի համակարգերը և ենթահամակարգերը՝** **Դատավորների միջև գործերի բաշխման և վերաբաշխման էլեկտրոնային համակարգ** **Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում բաշխման և վերաբաշխման ենթահամակարգեր՝ ըստ գործի տեսակների,** **Մասնագիտացված դատարաններում բաշխման և վերաբաշխման ենթահամակարգեր՝ ըստ գործի տեսակների,** **Քաղաքացիական, Քրեական և Վարչական վերաքննիչ դատարաններում բաշխման և վերաբաշխման ենթահամակարգեր՝ ըստ գործի տեսակների,** **Վճռաբեկ դատարանի բաշխման և վերաբաշխման ենթահամակարգեր՝ ըստ գործի տեսակների** **Կոլեգիալ դատական կազմերի ձևավորման և փոփոխման համակարգեր.** ▪ **ՀՀ վարչական դատարանում**

- ՀՀ վերաքննիչ դատարաններում

Դատական գործերի համակարգ

Կախված օգտագործողների հասանելիությունից, դատարանից և գործի տեսակից՝

- Ստեղծման ենթահամակարգ,
- Դիտման ենթահամակարգ,
- Լրացման (ավելացման) ենթահամակարգ
- Խմբագրման (հեռացման) ենթահամակարգ,
- Փնտրման ենթահամակարգ,

Մատյանների համակարգ

- Մուտքային մատյաններ ենթահամակարգ,
- Ելքային մատյաններ ենթահամակարգ,
- Բողոքների մատյաններ ենթահամակարգ,
- Դիմումների մատյաններ ենթահամակարգ,
- Մատյանների փնտրման ենթահամակարգ,

Անձնակազմի կառավարում

- Անձնական տվյալների ենթահամակարգ,
- Դատավարական ենթահամակարգ,
- Գնահատում ենթահամակարգ,
- Փնտրման ենթահամակարգ,

«Ադմինիստրատոր» համակարգ

- Հաստիքների կառավարման ենթահամակարգ,
- Անձնական տվյալների տեղափոխման ենթահամակարգ,
- Օգտագործողների հասանելիության ենթահամակարգ,
- Դատական գործերի նկարագրության ենթահամակարգ,
- Փնտրման գործիքակազմի ենթահամակարգ

«Ժամանակացույց» համակարգ

- Հանձնարարելու, հանձնարարականները վերահսկելու և դիտելու ենթահամակարգ

«Նամակներ» համակարգ

- Ծրագրի միջոցով նամակներ ուղարկելու, ստանալու և կառավարելու ենթահամակարգ

«Տեղեկատվություն» համակարգ

- Նորություններ, հայտարարություններ տեղադրելու ենթահամակարգ

Մոնիտորինգի համակարգ

- Հիմնական գործողությունների մոնիտորինգի ենթահամակարգեր,
- Փնտրման ենթահամակարգ,
- Հաշվետվությունների ենթահամակարգ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 23.12.2022թ.-ի ՀՕ-575-Ն սահմանադրական օրենքը՝ անհրաժեշտ է կատարել հետևյալ փոփոխությունները և ծրագրային ապահովումները.

1. Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի փոխարեն ստեղծել Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան և Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

2. Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանն և Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը ունեն նստավայրեր:

Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի նստավայրերն են՝

- Աջափնյակ-2 նստավայր
- Արաբկիր նստավայր
- Էրեբունի նստավայր

Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի նստավայրերն են՝

- Ավան նստավայր
- Աջափնյակ-1 նստավայր
- Կենտրոն նստավայր
- Շենգավիթ նստավայր

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում գործերի բաշխումը պետք է կատարվի ըստ նստավայրերի մասնագիտացման:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի գործերը մակագրություն և վերամակագրություն կատարելու հնարավորություն ունենան ըստ գործերի տիպերի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում:

5. Ավելացնել ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան:

6. Դատավորի անուն-ազգանունը հանվում է գործերի բաշխման ցանկից արձակուրդի դեպքում՝ արձակուրդի և դրան նախորդող տասնհինգօրյա ժամանակահատվածով:

7. Հակակոռուպցիոն դատարանում անհրաժեշտ է ստեղծել «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություններ» (06 կոդ), «Խուզարկության կատարման միջնորդություններ» (07 կոդ), «Նամակագրության, հեռագրական, փոստային հաղորդումների հսկողության միջնորդություններ» (08 կոդ), «Հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցությունների լսման և ձայնագրառման միջնորդություններ» (09 կոդ), «Հեռախոսների մուտքային և ելքային վերծանման թույլտվություն ստանալու միջնորդություններ» (10 կոդ), «Հետաքննության մարմնի աշխատողի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործերի դեմ բողոքներով միջնորդություններ» (11 կոդ), «Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման միջնորդություններ» (12 կոդ), «Պատիժը փոփոխելու, հետաձգելու և պատժից ազատելու մասին միջնորդություններ» (13 կոդ), «Հարկադիր բուժման տեսակի փոփոխության միջնորդություններ» (14 կոդ), «Այլ միջնորդություններ» (15 կոդ)

տիպի գործեր, որոնցից 11, 12, 13, 14 կոդերով միջնորդությունները բաշխվում են Ծրագրի միջոցով, իսկ 06, 07, 08, 09, 10 և 11 կոդերով միջնորդությունները գաղտնիություն պարունակող միջնորդություններ են:

8. Հակակոռուպցիոն դատարանում անհրաժեշտ է ստեղծել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման կապակցությամբ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դիմում» (03 կոդ), «Բանկային, ապահովագրական գաղտնիք, վարկային, արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ տեղեկություններ պահանջելու մասին դիմում» (04 կոդ) և « Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման կապակցությամբ ապացույցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դիմում» (05 կոդ) տիպի գործեր, որոնք գաղտնիություն պարունակող միջնորդություններ են: Նույնը նաև Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների համար:

9. Վերը նշված միջնորդությունների համար ստեղծել նոր մասնագիտացումներ:

Հիմք ընդունելով Բարձրագույն դատական խորհրդի 25.03.2021թ.-ի ԲԴԽ-16-Ն-6 (ներառյալ 05.01.2023թ-ի ԲԴԽ-2-Ն-1) որոշումը.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N1-ով նախատեսված հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ մինչդատական վարույթի դատական երաշխիքների վարույթները և բողոքները բաշխվում են հակակոռուպցիոն դատարանի կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացման դատավորների միջև:

2. Մինչև ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-575-Ն սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի գործելը, հակակոռուպցիոն դատարանին ընդդատյան կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ մինչդատական վարույթի դատական երաշխիքների վարույթների և բողոքների վերաբերյալ կայացված դատական ակտերի դեմ բողոքները բաշխվում են Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավոր նշանակված դատավորների միջև:

3. Դատավորների միջև գործերը բաշխվում են տվյալ օրվան նախորդող 365-օրյա ժամանակահատվածում (բացառությամբ գործուղման մեջ գտնվող դատավորների) տվյալ դատարանում (նստավայրում) համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորներից յուրաքանչյուրին բաշխված (հանձնված) գործերի միջին քանակի համահարթեցմամբ: Ընդ որում, տվյալ օրը դատավորներին բաշխված գործերի միջև տարբերությունը չի կարող գերազանցել 20 տոկոսը: Համահարթեցումն իրականացնելիս հաշվի են առնվում նվազեցումից օգտվող դատավորների համար սահմանված տոկոսաչափերը:

Առաջին ատյանի քրեական գործերում համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ վարույթների վիճակագրական տողերը սահմանվել են 17.1, 17.2, 17.3, 17.4, 17.5, 17.6, 17.7 նախկին 9.1, 9.2, 9.3, 9.4, 9.5, 9.6, 9.7, 9.8 վիճակագրական տողերի փոխարեն:

Վարչական գործերում 16 վիճակագրական տողով մուտք եղած գործերը պետք է մակագրվեն անհապաղ (միանձնյա):

ՀՀ մարզերում տեղակայված դատարանների նստավայրերի գրասենյակներում կենտրոնացված մուտքագրման և ելքագրման աշխատանքների իրականացման նպատակով՝ նախատեսել համապատասխան ծրագրային լուծումներ մարզկենտրոնի «Դատական համակարգ» համակարգչային ծրագրի սերվերում:

Սերվերներում տեղադրված ծրագրերի թարմացում և կարգաբերում, ինչպես նաև անհրաժեշտ ծրագրերի տեղադրում և թարմացում, Սերվերների հսկում (մոնիտորինգ), Սերվերների գերբեռնվածության ախտորոշում, Ծրագրի աշխատանքն ապահովող սարքավորումների անսարքության հայտնաբերում, առաջացած խնդիրների լուծման տարբերակների խորհրդատվության տրամադրում:

Ծրագրի աշխատանքն ապահովող, ինչպես նաև նոր սերվերների և սարքավորումների ծրագրային ապահովում և կարգաբերում՝ ապահովելով փոխգործակցումը գործող սերվերների միջև:

Սերվերներում առկա տեղեկատվության ամբողջականության և անվտանգության ապահովում, ինչպես նաև անվտանգության ապահովման կազմակերպման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:

Ծրագրի տվյալների բազաների պահուստային պատճենների ստեղծում (պահուստային սերվերներում և տրամադրված այլ կրիչներում՝ առնվազն շաբաթական կտրվածքով), տվյալների բազաների աշխատանքի մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում տվյալների բազաների վերականգնում պահուստային պատճեններից:

Տվյալների բազաների օպտիմիզացման խնդիրների վերաբերյալ խորհրդատվություն:

Վերարտադրման (ռեպլիկացիաների) ստուգում:

Պատվիրատուի պահանջով համակարգում պարբերաբար առաջացող խոտանված տվյալների մշակում և հեռացում:

Անհրաժեշտության դեպքում տվյալների բազայում իրականացվող հարցումների օպտիմալացում:

Ծրագրային թերությունների և բացթողումների շտկում:

Միջդատարանային կապի առկայության անընդմեջ ստուգում՝ խնդիրների առկայության դեպքում տվյալների փոխանցումն ապահովող օպերատորին և Պատվիրատուին տեղեկացում:

Սերվերների անվտանգության ապահովում՝ բացառելով չարտոնված մուտքերի հնարավորությունը, բազմաշերտ ցանցային անվտանգություն (Firewall), ցանցային ներխուժման փորձերի ախտորոշում և արգելափակում ավտոմատացված համակարգի միջոցով:

Անհրաժեշտության դեպքում Layer 2 մակարդակի առանձնացված կապուղիով տվյալների տեղափոխման համար անհրաժեշտ կարգաբերումների իրականացում:

Անհրաժեշտության դեպքում կատարել Սերվերների ծրագրային ապահովման (օպերացիոն համակարգերի, Firewall և այլ անհրաժեշտ ծրագրերի) պարբերական թարմացում:

Երևանի տարածքում սերվերների հետ առաջացած ծրագրային խնդիրները պետք է լուծվեն անհապաղ, ծայրահեղ դեպքում ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում՝ խնդրի կարգավորման մասին անմիջապես իրազեկելով պատվիրատուին:

Մարզերում սերվերների հետ առաջացած խնդիրները պետք է լուծվեն անհապաղ, ծայրահեղ դեպքում ոչ ուշ քան 3 օրացուցային օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում իրականացնել սերվերների տեղափոխումն՝ ապահովելով սերվերների տվյալների անվտանգությունը:

Ծրագրի բազայից տվյալների պարբերաբար և անխափան ավտոմատ փոխանցման ապահովում համապատասխանաբար «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի սերվեր:

Ծրագրին անվտանգ հեռակա հասանելիության ապահովում համապատասխան Վիրտուալ Մասնավոր Ցանցի (ՎՄՑ) միջոցով, անհրաժեշտության դեպքում նոր ՎՄՑ մոդուլների նախագծում՝ հիմնվելով Դատական դեպարտամենտի որոշակի ցանցային պահանջների վրա:

Պատվիրատուի պահանջով դրանում նշված օրվա դրությամբ համակարգում առկա վերծանումների (log) տրամադրում:

Պատվիրատուի և սպասարկողի միջև փաստաթղթաշրջանառությունը, մասնավորապես՝ պատվիրատուի հանձնարարությունները և դրանց ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունն իրականացնել էլեկտրոնային եղանակով: Պատվիրատուի հանձնարարությունները դասակարգել հետևյալ սկզբունքով՝

- *ՀՐԱՏԱՊ (խնդիրներ, որոնք կհանգեցնեն համակարգի, ենթահամակարգերի կամ վերջինիս բաղկացուցիչ մասերից որևէ մեկի բնականոն աշխատանքի խափանմանը),*
- *ԸՆԹԱՑԻԿ (խնդիրներ, որոնք չունեն որևէ ազդեցություն համակարգի աշխատանքի որակի վրա):*

Պատվիրատուի հանձնարարականների համաձայն, ՀՐԱՏԱՊ ծրագրային շտկումները և փոփոխությունները, պետք է կատարել անհապաղ:

ԸՆԹԱՑԻԿ ծրագրային շտկումները և փոփոխությունները իրականացնել կատարման ժամկետները համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:

Սպասարկողը Պատվիրատուի կողմից սահմանված պարբերականությամբ էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին է փոխանցում Ծրագրի սպասարկման ընթացքում ի հայտ եկած խնդիրների և կատարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն (վիճակագրություն), ներառյալ՝ կատարված աշխատանքների նկարագրությունը:

Սպասարկողը պարտավոր է տվյալների բազայի, ծրագրերի և սարքավորումների գաղտնաբառերի փոփոխությունը կատարել միայն Պատվիրատուի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ՝ Դատական դեպարտամենտի Համակարգչային ծառայության վերահսկողությամբ, որից հետո անմիջապես գաղտնաբառը փոխանցվում է Պատվիրատուին:

Սպասարկողը Ծրագրի աշխատանքն ապահովվող ծրագրերի ծրագրային կոդերի փոփոխություններ և սարքավորումների

կարգաբերումներ թույլատրող տիրույթ մուտք է գործում միայն նախապես պատվիրատուի հետ համաձայնեցված դեպքերում և կարգով:

Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում Պատվիրատուին է փոխանցում կատարված ծրագրային փոփոխությունների և նոր տարբերակների ծրագրային կոդերը (source codes) արտաքին էլեկտրոնային կրիչի վրա:

Պատվիրատուի կողմից այլ կազմակերպության հետ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու դեպքում Սպասարկողը ծրագրային կոդերը, տվյալների բազայի գաղտնաբառը, և սպասարկման համար անհրաժեշտ այլ տեղեկատվությունը փոխանցում է նոր Սպասարկողին:

Անհրաժեշտության դեպքում պատվիրատուն իրավունք ունի հրավիրել նաև անկախ փորձագետների և իրականացնել ծրագրային կոդերի և Սերվերների անվտանգության վերլուծություն:

Կողմերը երաշխավորում են ծրագրի կոդերի տվյալների գաղտնիության ռեժիմի պահպանությունը: Կողմերն իրավունք չունեն առանց մյուս կողմի համաձայնության ծրագրի կոդերի տվյալները հայտնել կամ այլ ձևով փոխանցել երրորդ անձանց:

Պատվիրատուն իրավունք ունի Պայմանագրով մատուցված ծառայությունների արդյունքները ՀՀ օրենսդրությանը չհակասող ձևերով ու եղանակներով օգտագործել իր հայեցողությամբ, առանց որևէ սահմանափակման՝ չխախտելով հեղինակների անձնական ոչ գույքային իրավունքները:

Սպասարկողը երաշխավորում է, որ Պատվիրատուին տրամադրված ծրագրային ապահովման օգտագործումը չեն խախտում և չեն խախտի որևէ երրորդ կողմի մտավոր սեփականության իրավունքը և այն ունի բոլոր անհրաժեշտ իրավունքները կամ միայն իր հաշվին գրավոր կապահովի իրավունքների բոլոր փոխանցումները և համաձայնությունները, որոնք անհրաժեշտ են մտավոր սեփականության իրավունքի տիրապետման և Պայմանագրում նշված երաշխիքների այլ փոխանցումների իրացման համար: Կապահովի բոլոր անհրաժեշտ գրավոր համաձայնագրերը, համաձայնությունները և իրավունքների փոխանցումն իր աշխատակիցներից և այլ անձանցից, որոնց ծառայություններն օգտագործվել են Ծրագրի մշակման համար:

Սպասարկողն ապահովում է CAST համակարգից բոլոր անհրաժեշտ տվյալների անխափան փոխանցումը «Էլեկտրոնային արդարադատության կառավարման համակարգի մշտադիտարկման համակարգ»:

Սպասարկման տեղեկատուի ծառայություն.

Սպասարկող կազմակերպությունը պարտավոր է կազմակերպել սպասարկման տեղեկատուի ծառայություն, որը կաջակցի Ծրագրի շահագործմանը: Ծառայությունը պետք է հասանելի լինի առնվազն հետևյալ աշխատանքային ժամերին՝

9:00-ից մինչև 18:00, երկուշաբթիից ուրբաթ, բացի տոն օրերից: Ծառայության խորհրդատվությունը պետք է ապահովվի՝ կիրառելով հետևյալ կապի միջոցները.

- Հեռախոս, էլեկտրոնային փոստ և այլն
- Այցեր սպասարկման կենտրոն

Տեղում սպասարկման ծառայություն

- Օպերացիոն համակարգի, Ծրագրի շահագործման հետ կապված այլ ծրագրային ապահովում, տվյալների վերականգնում,
- Ծրագրերի տեղադրում, թեսթավորում,
- Տվյալների պահուստավորում,
- Խափանման հետ կապված խնդիրների լուծում, որոնք անհրաժեշտ են համակարգի վերականգնման, վերանորոգման և (կամ) ձևափոխման համար,
- Սերվերների սպասարկում,
- Ջնջված ֆայլերի և տեղեկատվության վերականգնում (հնարավորության դեպքում),
- Սարքավորման տեղադրում և միացում:

Հեռակա սպասարկում.

Հեռակա սպասարկումը պետք է ապահովի Սերվերների և ծրագրերի հսկողությունը և անխափան աշխատանքը: Այս ծառայության կիրառումը հնարավորություն է տալիս իրականացնել ցանցի խնդիրների արագ ախտորոշում, կարգավորում, հեռակա սերվերների կառավարում, կապի առկայության նկատմամբ հսկողություն և այլն: Հեռակա սպասարկումը ներառում է Ծրագրի աշխատանքն ապահովող ցանցի սխալների հայտնաբերում, ծրագրային ապահովում, կարգավորում (ձևափոխում), սպասարկում և այլն: Հեռակա սպասարկումը Ծառայության հետ համատեղ իրականացվում է սպասարկողի գտնվելու վայրում՝ ապահովելով դրա անվտանգությունը, այդ թվում՝ բացառելով ցանկացած տեղեկատվության արտահոսք:

Հեռակա սպասարկումը պետք է ապահովի՝

- Սարքավորումների և ծրագրային ապահովման հետ կապված խնդիրների հայտնաբերում
- Անմիջական դիմելու տեխնոլոգիա
- Ծրագրային ապահովման տեղակայում
- Սերվերների ծրագրային սպասարկում (հնարավորության դեպքում օպերացիոն համակարգի ներդնում, թարմացում, փոփոխում)
- Պահուստային սերվերների ծրագրային սպասարկում
- Համակարգի ադմինիստրացիա

- Անվտանգության ապահովում՝ բացառելով չարտոնված մուտքերի և տեղեկատվության արտահոսքի հնարավորությունը
- Համակարգի և անվտանգության վերանայում և օպտիմալացում
- Բազային վերարտադրման (ռեպլիկացիաների) ստուգում
- Հնարավորության դեպքում տվյալների պահուստավորում

Ծառայության մատուցման հասցեները.

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 (Տվյալների կենտրոնի սերվերներ)
ք. Երևան, Կորյունի 17 (Տվյալների կենտրոնի սերվերներ)
ք. Երևան, Կորյունի 15/1 (Տվյալների կենտրոնին միանալու սերվեր)

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 (ՀՀ վճռաբեկ դատարանի սերվեր)

ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9 (ՀՀ հակակոռուպցիոն դատարան: Սերվերը գտնվում է Կորյունի 17 հասցեում)
ք. Ճամբարակ, Գ.Նժդեհ 99/1 (ՀՀ հակակոռուպցիոն դատարան: Սերվերը գտնվում է Կորյունի 17 հասցեում)
ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 (ՀՀ հակակոռուպցիոն դատարանի սերվեր: Սերվերը գտնվում է Կորյունի 17 հասցեում)
ք. Մարալիկ, Հրանտ Շահինյան 198 (ՀՀ հակակոռուպցիոան դատարան: Սերվերը գտնվում է Կորյունի 17 հասցեում):

ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23/1 (ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի սերվեր առանձին)
ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23 (ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի սերվեր)
ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23 (ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի սերվեր)
ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9 (ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի սերվեր)

ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23 (ՀՀ վարչական դատարանի Երևանի նստավայրի սերվեր)
ք. Գյումրի, Անկախության հրապարակ 7 (ՀՀ վարչական դատարանի Գյումրու նստավայրի սերվեր)
ք. Վանաձոր, Մխիթար Գոշի 6 (ՀՀ վարչական դատարանի Վանաձորի նստավայրի սերվեր)
ք. Սևան, Աբովյան 6/1 (ՀՀ վարչական դատարանի Սևանի նստավայրի սերվեր)
ք. Գորիս, Անկախության 4/1 (ՀՀ վարչական դատարանի Գորիսի նստավայրի սերվեր)

ք. Երևան, Օտյան փողոց 53/2 (ՀՀ սնանկության դատարանի Երևանի նստավայր: Սերվերը գտնվում է Կորյունի 17

հասցեում)

ք. Ճամբարակ, Գ.Նժդեհ 99/1 (ՀՀ սնանկության դատարանի Ճամբարակի նստավայր: Սերվերը գտնվում է Կորյունի 17 հասցեում)

ք. Մարալիկ, Հրանտ Շահինյան 198 (ՀՀ սնանկության դատարանի Մարալիկի նստավայր: Սերվերը գտնվում է Կորյունի 17 հասցեում)

ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 (ՀՀ սնանկության դատարանի Վայքի նստավայր: Սերվերը գտնվում է Կորյունի 17 հասցեում)

ք. Երևան, Տիգրան Մեծի 23/1 (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի սերվեր)

ք. Երևան, Տիգրան Մեծի 23/1 (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Կենտրոն նստավայրի սերվեր)

ք. Երևան, Նազարբեկյան թաղ. 40 (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Աջափնյակ 1 նստավայրի սերվեր)

ք. Երևան, Գյուլիքևխվյան 20 (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Ավան նստավայրի սերվեր)

ք. Երևան, Արշակունյաց պողոտա 24/1 (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Շենգավիթ նստավայրի սերվեր)

ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան 10 (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիր նստավայրի սերվեր)

ք. Երևան, Մովսես Խորենացի 162ա (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Էրեբունի նստավայրի սերվեր)

ք. Երևան, Օտյան փողոց 53/2 (Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի նախկին սերվեր)

ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 13փ. 1/1 (Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի սերվեր)

ք. Չարենցավան, Երիտասարդության 2/1 (Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Չարենցավանի նստավայրի սերվեր)

ք. Եղվարդ, Չարենցի 29 (Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Եղվարդի նստավայրի սերվեր)

ք. Աբովյան, Կոտայքի 8 (Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Աբովյանի նստավայրի սերվեր)

ք. Արտաշատ, Շահումյան 19 (Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի սերվեր)

ք. Մասիս, 3-րդ թաղամաս, Հերացու 26/31 (Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մասիսի նստավայրի սերվեր)

ք. Վեդի, Մ.Խաչատրյան 1 (Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վեդու նստավայրի սերվեր)

ք. Եղեգնաձոր, Միկոյան 23 (Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Եղեգնաձորի նստավայրի սերվեր)

ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 (Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վայքի նստավայրի սերվեր)

ք. Արմավիր, Հանրապետության 41 (Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Սերվերը գտնվում է Կորյունի 17 հասցեում)

ք. Էջմիածին, Կամոյի 15 (Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Էջմիածնի նստավայր: Սերվերը գտնվում է Կորյունի 17 հասցեում)

ք. Աշտարակ, Էջմիածնի խճուղի 65 (Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի սերվեր)

ք. Ապարան, Գայի 25 (Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Ապարանի նստավայրի սերվեր)

ք. Թալին, Խանջյան 13 (Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Թալինի նստավայրի սերվեր)

ք. Իջևան, Նալբանդյան 1/1 (Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի սերվեր)

ք. Դիլիջան, Շահումյան 15 (Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Դիլիջանի նստավայրի սերվեր)

ք. Նոյեմբերյան, Կամոյի 2 (Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Նոյեմբերյանի նստավայրի սերվեր)

ք. Բերդ, Այգեստան 49ա (Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Բերդի նստավայրի սերվեր)

ք. Գավառ, Սայադյան 18 (Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Սերվերը գտնվում է Կորյունի 17 հասցեում)

ք. Սևան, Աբովյան 6/1 (Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սևանի նստավայրի սերվեր)

ք. Մարտունի, Շահումյան 5 (Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մարտունու նստավայրի սերվեր)

ք. Վարդենիս, Լ.Ազգալդյան 2 (Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վարդենիսի նստավայրի սերվեր)

ք. Ճամբարակ, Գ.Նժդեհ 99/1 (Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Ճամբարակի նստավայրի սերվեր)

ք. Վանաձոր, Մխիթար Գոշի 6 (Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի սերվեր)

ք. Ալավերդի, Թումանյան 8 (Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Ալավերդու նստավայրի սերվեր)

ք. Տաշիր, Ջահուկյան 19 (Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Տաշիրի նստավայրի սերվեր)

ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 2 նրբ. 10 (Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սպիտակի նստավայրի սերվեր)

ք. Ստեփանավան, Սուրբ Վարդանի 53 (Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Ստեփանավանի նստավայրի սերվեր)

ք. Կապան, Մելիք Ստեփանյան 3/2 (Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի սերվեր)

ք. Գորիս, Անկախության 4/1 (Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի նստավայրի սերվեր)

ք. Սիսիան, Գարեգին Նժդեհի 6 (Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սիսիանի նստավայրի սերվեր)

ք. Մեղրի, Զորավար Անդրանիկ 24/1 (Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մեղրիի նստավայրի սերվեր)

ք. Գյումրի, Անկախության հրապարակ 7 (Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի սերվեր) ք. Արթիկ, Բաղրամյան 40 (Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արթիկի նստավայրի սերվեր) ք. Մարալիկ, Հրանտ Շահինյան 198 (Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մարալիկի նստավայրի սերվեր):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 25փ. 25տ.
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01555207
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1570003653770100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Ա. Մանուկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
« 31 » « 01 » 2023 թ. կնքված
«ԴԴ-ՄԱԵՁԲ-23/06» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության													
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/1	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ («Դատական համակարգ» համակարգչային ծրագրի (CAST) սպասարկման ծառայություններ)	6 000 000	9 000 000	9 000 000	9 000 000	9 000 000	9 000 000	9 000 000	9 000 000	9 000 000	9 000 000	9 000 000	**9 000 000**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գևլստյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 25փ. 25տ.
ՀՎՀՀ՝ 01555207
Հ/Հ՝ 1570003653770100
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Մանուկյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« 31 » « 01 » 2023 թ. կնքված
«ԴԴ-ՄԱԾՁԲ-23/06» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« 31 » « 01 » 2023 թ. կնքված
«ԴԴ-ՄԱԾՁԲ-23/06» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն